Արձանագրություն N 4

<<ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-03/2017>> ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի նիստի

ք. Երևան 06.11.2017թ. 11:00

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Ն. Հարությունյան

Հանձնաժողովի անդամներ՝ Ե. Ենգիբարյան, Մ. Բուռնաչյան, Լ. Գաբրիելյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Մ. Պետրոսյան

1. <<ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-03/2017>> ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի հանձնաժողովի որոշմամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցի՝ <<Էյ Էնդ Էմ Ֆայնենշլ Քոնսալթինգ>> ՓԲԸ-ի հայտը մերժվել է համաձայն սույն ընթացակարգի հանձնաժողովի նիստի Արձանագրություն 3-ի, երկրորդ տեղը զբաղեցնող հայտատուի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահկսվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև <<ֆինանսական միջոցներ>> որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե հարցումն ուղարկվել է 01.11.2017թ.: 03.11.2017թ.-ին ստացված հարցման պատասխանի համաձայն, <<Ալֆա Փարթներս>> ՍՊԸ-ի՝ հայտը ներկայացնելուն նախորդող երեք հաշվետու տարիների համախառն եկամուտի հանրագումարը չի համապատասխանում սույն ընթացակարգի հրավերով սահմանված պահանջներին: Հետևաբար, <<Ալֆա Փարթներս>> ՍՊԸ-ի հայտը ՀՀ Կառավարության <<Գնումների գործընթացի կազմակերպման արգը հաստատելու և ՀՀ Կառավարության 2011 թվականի փետրվարի 10-ի թիվ 168-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին>> 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշման Հավելված 1-ի 63-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն մերժվում է:

2. <<ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-03/2017>> ծածկագրով գնանշման հարցման ձևով գնման ընթացակարգի շրջանակներում որևէ հայտատու հաղթող չի ճանաչվում, պայմանագիր չի կնքվում: Ընթացակարգը չեղյալ է հայտարարվում:

Սույն արձանագրության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել ՀՎԷԷՀ-ԳՀԾՁԲ-03/2017 ծածկագրով գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի քարտուղար Մարինե Պետրոսյանին:

Հեռախոս՝ 010-54-51-21

Էլեկտրոնային փոստ՝ p.marine@r2e2.am

Պատվիրատու՝ Հայաստանի վերականգնվող էներգետիկայի և էներգախնայողության հիմնադրամ

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 4, դեմ՝ 0: